ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2018-2020թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-փետրվար)

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %







Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2020թ. հունվար-փետրվարի 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 108.7%, 2019թ. հունվար-փետրվարին 2018թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 106.8%, իսկ 2018թ. հունվար-փետրվարին 2017թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 110.1%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-փետրվարին կազմել է 299,571.4 մլն.դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 36,678.0 և 44,867.9 մլն. դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-փետրվարին կազմել է 26,966.1 մլն.դրամ, ինչը 2019 և 2018 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 1,850.0 և 5,323.1 մլն. դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2020 թ. հուվար-փետրվարին կազմել է 435,564.3 մլն.դրամ, ինչը 2019 և 2018 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 23,514.2 և 76,502.0 մլն. դրամով. իսկ այլ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-փետրվարին կազմել է 305,238.3 մլն.դրամ, ինչը 2019 և 2018 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 36,797.3 և 79,552.1 մլն. դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2020թ. հունվար-փետրվարին 2019թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 115.3%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 101.9%-ի և 108.3%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2020թ. հունվար-փետրվարին 2019թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 105.8%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 121.6%-ի և 122.7%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Առևտրի շրջանառության իրական աճը 2020թ. հունվար-փետրվարին 2019թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 106.3%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 113.1%-ի և 117.4%-ի պարագայում. իսկ ծառայությունների ծավալի իրական աճը 2020թ. հունվար-փետրվարին 2019թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 111.2%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 117.5%-ի և 115.1%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-փետրվարին կազմել է 59,903.2 մլն.դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 14,666.7 և 6,289.0 մլն. դրամով:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-փետրվարին կազմել է 183,833.0 մլն. դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 14,287.8 և 36,813.8 մլն. դրամով:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-փետրվարին կազմել է 52,518.7 մլն. դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 8,421.6 և 2,455.9 մլն. դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-փետրվարին կազմել է 3,316.5 մլն.դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 698.1 և 690.8 մլն. դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2020թ. հունվար-փետրվարին 2019թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 136.5%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 92.7%-ի և 98.0%-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2020թ. հունվար-փետրվարին 2019թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 109.5%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 108.0%-ի և 118.4%-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2020թ. հունվար-փետրվարին 2019թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 118.6%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 93.0%-ի և 94.9%-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2020թ. հունվար-փետրվարին 2019թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 83.1%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 98.7%-ի և 100.7%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ





Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հունվար-փետրվարին կազմել է 72,950.7 մլն. դրամ, ինչը 2019 և 2018 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 5,138.0 և 25,962.9 մլն. դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հունվար-փետրվարին կազմել է 43,636.9 մլն.դրամ, ինչը 2019 և 2018 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 5,149.9 և 7,063.4 մլն. դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հունվար-փետրվարին կազմել է 77,293.2 մլն.դրամ, ինչը 2019 և 2018 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 13,723.3 և 25,589.5 մլն. դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2020թ. հունվար-փետրվարին 2019թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 106.6%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 141.6%-ի և 113.7%-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2020թ. հունվարին 2019թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 108.2%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 105.2% և 107.6%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2020թ. հունվար-փետրվարին 2019թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 117.7%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 121.4%-ի և 119.1%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2020թ. հունվար-փետրվարին 2019թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 99.9%, 2019թ. հունվար-փետրվարին 2018թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 101.3%, 2018թ. հունվար-փետրվարին 2017թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 103.1%: ՍԳԻ-ն 2020թ. փետրվարին 2019թ. դեկտեմբերի նկատմամբ կազմել է 101.2%, 2019թ. փետրվարին 2018թ. դեկտեմբերի նկատմամբ՝ 102.5%, 2018թ. փետրվարին 2017թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 102.4%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2020թ. փետրվարի վերջի դրությամբ կազմել է 981,603.0 մլն դրամ, ինչը 292,814.0 մլն. դրամով կամ 43.3%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 339,139.0 մլն. դրամով կամ 52.8%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2020թ. փետրվարի դրությամբ կազմել է 85709 մարդ, ինչը 3283 մարդով կամ 3.98%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 1170 մարդով կամ 1.38%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2020թ. փետրվարի դրությամբ կազմել է 62057 մարդ, ինչը 2804 մարդով կամ 4.32%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 7419 մարդով կամ 10.68%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)



ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)



Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ



Պետական բյուջեի պակասուրդը/հավելուրդը և դրա ֆինասավորման աղբյուրները, ընթացիք գներով, մլն դրամ



Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2020թ. հունվար-փետրվարին կազմել է 1,036.4 մլն. դոլար, ինչը 23.9 մլն. դոլարով կամ 2.4%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 59.7 մլն. դոլարով կամ 5.4%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2020թ. հունվար-փետրվարին կազմել է -304.4 մլն. դոլար, ինչը 235.1 մլն. դոլարով կամ 10.3%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 26.8 մլն. դոլարով կամ 8.1%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2020թ. հունվար-փետրվարին կազմել է 366.0 մլն դոլար, ինչը 29.5 մլն. դոլարով կամ 8.8%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 16.4 մլն. դոլարով կամ 4.3%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2020թ. հունվար-փետրվարին կազմել է 670.4 մլն դոլար, ինչը 5.6 մլն. դոլարով կամ 0.8%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 43.3 մլն. դոլարով կամ 6.1%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2020թ. հունվար-փետրվարին կազմել է 190468 դրամ, ինչը 18023 դրամով կամ 10.5%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 20859 դրամով կամ 12.3%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2020թ. հունվար-փետրվարին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 41,706.1 մլն. դրամ, ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -15,296.4 մլն. դրամ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -26,409.7 մլն. դրամ: 2019 թ. հունվար-փետրվարին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 40,554.3 մլն. դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -18,586.3 և -21,968.0 մլն դրամ: 2018թ. հունվար-փետրվարին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է -4,026.1 մլն. դրամ, ընդ որում, ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 20,904.3 և -16,878.2 մլն. դրամ:

Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ